



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Վ Ա Յ Ո Ց Ձ ՈՐ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 185 -Ա

« 04 » ՀՈՒՆԻՍԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱԶՈՐԻ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԳՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՂԱՎՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 20.11.2023Թ.
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 179 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 30-րդ կետը, 31-րդ կետի 1-ին, 3-րդ ենթակետերը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված կարգապահական տույժի կիրառման կարգը չպահպանելու համար ուժը կորցրած ճանաչել «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մանուկյանի 2023 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 179 հրամանը:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մանուկյանին՝ սույն որոշման մասին ծանուցել 2023 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 179 հրամանով կարգապահական պատասխանատվության ենթարկված աշխատակիցներին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

2024-05-04 12:08:59 ժամանակահատվածում ստորագրվել է



Signed by: KOLYA MIKAELIAN 3507670100

Կ.ՄԻԿԱԵԼՅԱՆ

p. Եղեգնաձոր